

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» «-----» 2017թ.

N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի <<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2017 թվականի ծրագրի վերաբերյալ>> հ.648-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

1. Երևան համայնքի սեփականություն համարվող Կորյունի փողոցի հ.8 շենքի հ.10՝32.8 քմ բնակելի տարածքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 26.10.2016թ. N17112016-01-0468 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) նույն հասցեում գտնվող 38.65քմ մակերեսով բնակարանի սեփականատերեր Ալբերտ, Արմեն, Արման Հունանյաններին ու Ամալյա Մկրտչյանին:

2. Երևան համայնքի սեփականություն համարվող Կորյունի փողոցի հ.8 շենքի հ.10՝22.6քմ բնակելի տարածքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 26.10.2016թ. N 26102016-01-0200 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) նույն հասցեում գտնվող 47.97քմ մակերեսով բնակարանի սեփականատերեր Մելանյա Ստեփանյանին և Անահիտ ու Հայկ Սարգսյաններին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Կենտրոն վարչական շրջանի Կորյունի փողոցի հ.8 շենքի հ.10՝ 32.8քմ /որից 7.0 քմ ընդհանուր համատեղ սեփականություն/ բնակելի տարածքը, սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) նույն հասցեում գտնվող 38.65քմ մակերեսով բնակարանի սեփականատերեր Ալբերտ, Արմեն, Արման Հունանյաններին ու Ամալյա Մկրտչյանին, իսկ Կորյունի փողոցի հ.8 շենքի հ.10՝ 22.6քմ /որից 7.0 քմ ընդհանուր համատեղ սեփականություն/ բնակելի տարածքը, սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) նույն հասցեում գտնվող 47.97քմ մակերեսով բնակարանի սեփականատերեր Մելանյա Ստեփանյանին, Անահիտ և Հայկ Սարգսյաններին:

Քննարկվող անշարժ գույքերը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 26.10.2016թ. N 17112016-01-0468 և 26.10.2016թ. N 26102016-01-0200 վկայականների տվյալների, հանդիսանում են Երևան համայնքի սեփականությունը:

Կորյունի փողոցի հ.8 շենքի հ.10 հասցեներում գտնվող 32.8քմ և 22.6քմ ընդհանուր մակերեսով անշարժ գույքերը հանդիսանում են նույն հասցեներում գտնվող, սեփականության իրավունքով Ալբերտ, Արմեն, Արման Հունանյաններին և Ամալյա Մկրտչյանին պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 05.06.2002թ. հ.763633 վկայական) 38.65քմ մակերեսով և Մելանյա Ստեփանյանին, Անահիտ և Հայկ Սարգսյաններին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 28.10.2004թ. հ.1475384 վկայական) 47.97քմ մակերեսով բնակարանների՝ կոմունալ և օժանդակ հարմարություններն ու միջանցքը: Սեփականատերերը տարիներ շարունակ օգտագործել են այդ տարածքները, սակայն համապատասխան փաստաթղթերի բացակայության պատճառով հնարավորություն չեն ունեցել սեփականաշնորհել իրենց բնակարանների մաս կազմող բնակելի տարածքները:

Նշված բնակարանների սեփականատերերը 09.01.2017թ և 11.01.2017թ. տվել են իրենց փոխադարձ համաձայնությունները, որպեսզի վերոհիշյալ հասցեներում գտնվող Ալբերտ, Արմեն, Արման Հունանյանների և Ամալյա Մկրտչյանի կողմից օգտագործվող 32.8քմ ընդհանուր մակերեսով բնակելի տարածքը (որից 7.0քմ-ն համատեղ սեփականություն) նվիրվի վերջիններիս, իսկ 22.6քմ-ն՝ Մելանյա Ստեփանյանին, Անահիտ և Հայկ Սարգսյաններին (որից 7.0քմ-ն համատեղ սեփականություն):

Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ. 648-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են երևան քաղաքի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ. 648-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի՝ բնակելի տարածքներն անհատույց օտարման համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ
ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակելի տարածքներն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ԿԱՄ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան համյանքի սեփականություն համարվող բնակելի տարածքներն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ